Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1463

Дневник Ирис

Іа.

2(075)
Д-84

03 AUG 2009
2(075)
Ա-84

ԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՌԱՋԻՆ ԳՐՔՈՅԿ

«ԱՂՕԹՔՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Պետական գիմնազիօնների պարբաստական դասարանների հայ աշակերտների և աշակերտուհիների համար։

Վեցերորդ տպագրութիւն

220
576-ԵՐ ԶՆԻԿ

ԿԱԶՄԵՑ
ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑ
...սոյց Տփխիսի առաջին իգական գիմնազիօնի։

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրատպարան, «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Մադաթեան փողոց № 15
(116)

1463
220
576-ԵՐ
2(0Հ5)
Ե-34
220
578-ԵՐ

ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԱՌԱՋԻՆ ԳՐՔՈՅԿ

«ԱՂՕԹՔՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Պետական գիմնազիօնների պատրաստական դասարանների հայ աշակերտների և աշակերտուհիների համար։

09690
ՀԱՅ Հ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Научная Библиотека
7/XI 1922
Վեցերորդ տպագրութիւն
ԵՐԵՎԱՆ, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԱՍՆԻԿՅԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱԶՄԵՑ

ԵԶՆԻԿ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑ

Կրօնուսոյց Տփխիսի առաջին իգական գիմնազիօնի։

ԹԻՖԼԻՍ

Էլեֆտրատարժ տպարան, «ՀՅՐՄԻՍ» ընկ. Մադաթեան փողոց № 15

(116)

10 APR 2013

Дозволено цензурою. Тифлисъ, 20 іюля 1905 г.

Ի կատարումն բարձու հրամանի Սրբազնասուրբ Քահանայապետի ազգիս՝ Տեառն Տեառն Մկրտչի Առաջնոյ, ընթերցեալ զայս Դասագիրս Կրօնի՝ ոչ գտի՝ իսմա զբանս և զբառս հակառակ դաւանութեան մերս ուղղափառ Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ. ի ստուգութիւն ոլոյ իմովս իսկական ստորագրութեամբ և գրոշմամբ անուանական կնքոյս վկայաբանեմ։ Ի 23 Յունվարի 1898 ամի 'ի Սուրբ Էջմիածին։

Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանց։

Ըստ բարձու հրամանի Վեհ. Հայրապետի ազգիս, Դիւանս թոյլատրէ տպագրել զդասատետրս չորրորդ տպագրութիւն, զոր և վաւերացուցանէ ստորագրութեամբ և գրոշմամբ կնքոյ Հայրապետական Դիւանի։

Դիւանապետ Կորիւն Վարդապետ։

Ի 10 Փետրվարի 1901 ամի 'ի ք. Տփխիս, Թ. 246.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ընդհանրապէս նկատուած է, որ պետական դպրոցներում կրօնուսուցչի պաշտօն ստանձնող արժանապատիւ հայերը հանդիպում են մեծամեծ դժուարութիւնների՝ չունենալով մի յարմարաւոր ձեռնարկ այդ դպրոցների համար։ Թէպէտ և կրօնի դասատուութեան համար կան լոյս տեսած բաւականին դասագրքեր, բայց նրանք իրանց ընդարձակ նիւթով և լայն ծաւալով և ոմանք մինչև անգամ իրանց գրաբարախառն լեզուով ու դարձուածքներով, որոնցից ոմանք էլ ընդունուած են որպէս ձեռնարկ պետական դպրոցներում,—անհամապատասխան են այդ դպրոցներին, ուր այդ առարկայի աւանդման համար սուղ ժամանակ է տուած և ուր ուսանող սանիկների մի մասն էլ տկար է իւր մայրենի լեզուի մէջ։

Երկար տարիների իմ ուսուցչական փորձերը պետական դպրոցներում՝ բերել են ինձ այս հաստատ համոզման, որ այդ դպրոցների կրօնի դասաւանդութեան համար անհրաժեշտ է կազմել մի այնպիսի դասագիրք, որի մէջ այդ առարկայի աւանդման համար որոշած ժամանակի չափը և աւանդելի նիւթն ու նրա ծաւալը նկատի առնուած լինէին և որի մէջ ամփոփ կերպով բովանդակուած լինէին ամենագլխաւոր կրօնական գիտելիքները, որոնք անհրաժեշտ են ամեն մի հայ աշակերտուհու և աշակերտի համար։

Ձեռք զարկելով այս կարևոր գործին՝ ես արդէն պատրաստել եմ պետական միջնակարգ իգական դպրոցների համար կրօնագիտութեան մի ընդհանուր ձեռնարկ, որի մէջ բոլոր դասա-

բաններում աւանդելի կրօնի նիւթերը—դասընթացները՝ տեղի, ժամանակի և սանիկների գիտակցութեան համաձայն՝ որոշուած—դասաւորուած են և որոնք հետզհետէ պիտի լոյս տեսնեն առանձին գրքոյկներով։

Սոյն գրքոյկը յիշեալ դպրոցների պատրաստական դասարանների կրօնի նիւթը—դասընթացն է և կրում է «Աղօթքների բացատրութիւնները և գլխաւոր տօների համառօտ պատմութիւնները» խորագիր։

Այս գործը յաջողութեամբ գլուխ բերելու համար ես օգտուել եմ առհասարակ առաջնակարգ նշանակութիւն ունեցող կրօնի դասագրքերից, մերթ համառօտելով, մերթ ընդարձակելով և տեղտեղ ես մի քանի կտորներ նոյնութեամբ յառաջ բերելով։

Սա իբրև առաջին փորձ թերևս ունենայ և իւր պակասաւոր կողմերը, որոնց ցոյց կտայ հետզհետէ ժամանակը, միայն վստահանում եմ կարծել, որ այսպիսի մի ձեռնարկի տուած օգուտն անհամեմատ աւելի կ'լինի. ուստի հրաւիրում եմ իմ պաշտօնակից՝ պետական դպրոցների կրօնուսոյց՝ արժանապատիւ հայերի ուշադրութիւնը։

Եղնիկ աւագ քահանայ Երզնկեան

Ի 25 յուլիսի 1900 ամի
'Ի ք. Տփխիս։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Աղօթքներ

Երես

1 Աղօթքը և նրա արտաքին նշանները . . 9
2 Աղօթքի տեղը, ժամանակը և ասելու կարգը. 11

Աղօթքների համառօտ բացատրութիւնները

1 Համառօտ փառաբանութիւն Աստուծոյ. . 11
2 Աղօթք Քրիստոսի խաչելութեան. . . 13
3 Աղօթք տէրունական 14
4 Աղօթք դասից առաջ 18
5 Աղօթք դասից յետոյ . . . . .
6 Աղօթք ճաշից առաջ 20
7 Աղօթք ճաշից յետոյ 20
8 Աղօթք (ժամամուտ) Քրիստոսի Յարութեան. 21
9 Աղօթք թագաւորի համար 22
10 Աղօթք սուրբ Աստուածածնի . . . 23
11 Աղօթք առաւօտեան 23
12 Աղօթք երեկոյեան 25

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Գլխաւոր տօների համառօտ պատմութիւնները

1 Մարիամ Ս. Կուսի ծնունդը . . . 26
2 Երեք տարեկան ընծայումն 27

Ս. Կոյս Մարիամի Աւետումը . . . 27
4 Քրիստոսի Ծնունդը 28
5 Տեառընդառաջ 30
6 Քրիստոսի Մկրտութիւնը 31
7 Վարդավառ 32
8 Ծաղկազարդ 33
9 Աւագ Հինգշաբթի 35
10 Յիսուսի Խաչելութիւնը 36
11 Յիսուսի Թաղումը 38
12 Քրիստոսի Յարութիւնը—Զատիկ . . . 39
13 Քրիստոսի Համբարձումը 40
14 Հոգեգալուստը 41
15 Ս. Աստուածածնի Վերափոխումը . . . 41
16 Ս. Խաչի Գիւտը 42
17 Ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները . 44
18 Ս. Գրիգոր Լուսաւորիչը 45

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

1 Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ Հաւատոյ Հանգանակը 47
3 Տասն պատուիրանները 55

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

1 Համառօտ տեղեկութիւն Աստուածպաշտութեան մասին 66
2 Ս. պատարագի մասին 61

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՂՕԹՔՆԵՐ

Աղօթքը եւ նրա արտաքին ճեւաները

Աստուծուն երկիւղածութիւնով դիմել և նրա հետ խօսելը՝ կոչվում է աղօթք։

Աղօթքով մենք խնդրում ենք Աստուծուց այն, ինչի համար մենք կարիք ունինք. շնորհակալութիւն ենք յայտնում Նրան Իր ողորմութեան և տուած բարիքների համար և փառաբանում ենք Իր կատարելութիւնների համար։ Այս պատճառով էլ մեր աղօթքները լինում են— ա)՝ խնդրողական, բ)՝ շնորհակալական և գ)՝ փառաբանական։ Բայց յաճախ պատահում է, որ մեր հոգու այս բոլոր զգացումները միացած և խառնուած են արտայայտվում մեր աղօթքների մէջ—այսպէս՝ օր. աղօթքը երբեմն սկսվում է գոհացողականով, յետոյ անցնում է փառաբանականի և վերջանում է խնդրուածներով այն կարիքների համար, ինչոր մեզ տալու համար Նրան հաճելի է, կամ՝ սկսվում է փառաբանականով, անցնում է գոհացողականի և վերջանում խնդրուածներով—և այլն։

Աղօթքով մենք դիմում ենք նմանապէս Աստուածամօրն, սուրբ հրեշտակներին և սուրբ մարդոց, բայց ոչ այնպէս, ինչպէս Աստուծուն։ Սուրբ Աստուածամօրն և սրբերին դիմելով՝ խնդրում ենք, որ նրանք մեզ համար բարեխօս լինեն Աստուծու առաջ։

Մենք աղօթում ենք ոչ միայն մեզ համար, այլ և ուրիշների,—թէ կենդանիների և թէ ննջեցեալների համար։

Երբեմն լինում են այնպիսի հանգամանքներ, որ մարդ չէ կարողանում աղօթել աղաղակ և յայտնի, որքան և ցանկանար նա։ Այդպիսի դէպքերում կարելի է գործածել մտաւոր աղօթքներ և այդ լինում է, երբ աղօթում է միայն հոգով և մտքով և չէ արտասանում իր աղօթքները խօսքերով կամ նշաններով։

Մենք աղօթելով գործ ենք ածում հետեւեալ արտաքին նշանները,—այն՝ աչքերը դէպի երկինք ենք դարձնում, գլուխը խոնարհեցնում, ձեռքերը տարածում, երկրպագում, ծունկ չոքում, հոգոց դնում, համբուրում սուրբ պատկերներին և վառում նրանց առաջ կանթեղներ ու մոմեր։ Այս նշաններով... մենք արտայայտում ենք Աստուծուն մեր անձնուիրութիւնը ստացած բարիքների համար և երկիւղածութիւնը՝ նրա մեծութեան առաջ։

Աղօթքի ամենագլխաւոր նշանն է խաչակնքելը։ Երեսին խաչակնքելը լինում է այսպէս. աջ ձեռքի երեք մատները միացնելով նախ դնում ենք ճակատի վրայ, յետոյ կուրծքի և ապա ձախ և աջ թեւերի մօտ, իսկ վերջն էլ՝ մէջտեղը—կուրծքի վրայ։ Այս նշանով մենք արտայայտում ենք հաւատ դէպի այն, ինչ որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը սովորեցրեց մեզ և ինչ որ արեց նա

մեր փրկութեան համար։ Խաչակնքելով նաև ցանկանում ենք սրբել նուրբ խաչի զօրութիւնով մեր միտքը, զգացմունքը, ցանկութիւնը և գործունէութիւնը։ Բացի այս խաչակնքելով աղօթքի և առհասարակ ամեն մի գործի սկսելու ժամանակ, մենք ցոյց ենք տալիս, թէ յոյս չենք դնում ոչ մեր ոյժերի և ոչ մարդոց օգնութեան վերայ, այլ ապաւինում ենք միայն Աստուծու օգնութեանը, որ մեզ Քրիստոսի Սուրբ Խաչի զօրութիւնով հեռու պահէ ամեն տեսակ ձախորդութիւններից։

ԱՂՕԹՔԻ ՏԵՂԸ, ԺԱՄԱՆԱԿԸ ԵՒ ԱՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Աստուած գտնվում է ամեն տեղ։ Նա ամեն տեղ լսում և տեսնում է մեզ։ Այս պատճառով կարելի է աղօթել ոչ միայն Աստուծու անուանակոչուած սուրբ տաճարներում, այլ և ամեն տեղ։ Քրիստոնեաներից ոմանք սովորութիւն ունին օծուած պատկերներ պահել տան մէջ, որոշեալ տեղը, սենեակների անկիւններում, երբեմն առանձին պահարաններում, դէպի որը դարձնելով իրանց երեսները աղօթում են։ Հայերս այդ սովորութիւնը չունենք, օծուած պատկերներն եկեղեցումն ենք պահում իբրև նուիրական առարկայ, որին արժան չէ տուն։

Սուրբ պատկերները ծառայում են մեզ նրա համար, որ նայելով նրանց՝ յիշենք նրանց նախատիպն և ուշադրութիւնով ու երկիւղածութիւնով աղօթենք։ Այս պատկերները, նայելով մեր ջերմեռանդութեան և կարողութեան, շատ անգամ զարդարում ենք զանազան զարդերով և նրանց առաջ վառում ենք կանթեղներ ձիթով և մեղրամոմեր։ Լոյսը, որ վառվում է պատկերների առաջ, արտայայտում է մեր հաւատի լոյսը և մեր

սիրոյ տաքութիւնը։

Մենք Աստուծոյ կարող ենք ստանալ բոլոր հարկաւոր բաները մեր կեանքի համար։ Նա ամեն բոպէ տալիս է Իր ողորմութիւնը։ Նրա մեծ գործերը մենք միշտապէս տեսնում ենք։ Ուրեմն մենք միշտ կարիք ունինք խնդրելու Աստուծուն, շնորհակալութիւն անելու, և փառաբանելու Նրան։ հետևապէս և միշտ պէտք աղօթենք Նրան։ Բայց որովհետև շատ ժամանակ է հարկաւոր լինում երկրաւոր կեանքի պիտոյքները հոգալու համար. ուստի աղօթելու որոշեալ ժամերը հետևեալներն են, ա)՝ առաւօտեան, երբ քնից զարթնում ենք. բ)՝ օրուայ ընթացքում այն է՝ գործի (աշխատանքի կամ ուսման) սկսելու և վերջացնելու ժամանակ։ հաց ուտելուց առաջ և վերջը և գ) գիշերը՝ քնելուց առաջ։

Աղօթելիս մենք ուղիղ և երկիւղածութիւնով կանգնում ենք, եթէ պատկեր կայ, պատկերի առաջ և եթէ ոչ՝ երեսներս դէպի արևելք դարձնելով և խաչակնքելով ուշադրութիւնով և առանց շտապելու՝ ասում ենք մեր աղօթքները։ Աղօթքը վերջացնելուց յետոյ դարձեալ խաչակնքում ենք երեսներս և երկրպագութիւն տալիս։

ԱՂՕԹՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՄԱՌՕՏ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

„Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն“

Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով (օգնութիւնով) Ամէն։

Այս խօսքերով ենք մենք — քրիստոնեաներս՝ սկսում մեր գործը և արտասանելով սուրբ Երրորդութեան անունը՝ արտայտում ենք մեր հաւատը, որ ամենայն ինչ կամենում ենք գործել Աստուծու օգնութիւնով։

Աստուծուն մենք անուանում ենք Հայր, Որդի և Հոգի Սուրբ, որովհետև Նա էութիւնով մի է, իսկ անձնաւորութիւնով՝ երեք։ Առաջին անձն է Հայր, երկրորդը՝ Որդի և երրորդը՝ Հոգի Սուրբ։ Այդ երեք անձինքն ունին մի անուն — Աստուած։ Նրանք ունին հաւասար զօրութիւն, պատիւ և կազմում են սի էութիւն (գոյութիւն)։ «Ամէն» խօսքը նշանակում է ճշմարիտ, այդպէս, թող լինի այդպէս։

№ 2. ԱՂՕԹՔ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ

Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ — (երեք անգամ)։

Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր (զօրեղ) Սուրբ և Անմահ, որ խաչուեցար մեզ համար, ողորմիր մեզ։

Այս աղօթքը՝ ըստ ապանդութեան՝ ասուած է Քրիստոսի խաչից իջեցնելու ժամանակ, ուստի և ասվում է 'ի դէմս Աստուծու Որդու։

Սուրբ և Աստուած ենք անուանում Նրան, որովհետև Նա Աստուծու Որդի է և ինքն էլ Աստուած է, և չկայ Նրա մէջ ոչինչ վերք։ Հզօր ենք անուանում, որովհետև Նա ամենակարող է և յաղթեց մահուան։

Անվախ ենք անուանում, որովհետև նա յաւիտենական է, և թէպէտ մարմնով մեռաւ, բայց Աստուծութիւնով անմահ է և հօր Աստուծու և Սուրբ Հոգու հետ էակից։

Այս աղօթքով մենք խնդրում ենք Աստուածորդուց, ա) որ Իր նաչի և մահուան արդիւնքով ներէ մեր մեղքերը, մաքրէ մեր հոգին և արգէ մեզ սիրտը։ Մեղք են—անուանում մեր այն խօսքերը, ցանկութիւնները, խորհուրդներն ու գործերը, որոնք հակառակ են Աստուծու կամքին, և բ) խնդրում ենք, որ իբրև Տէր և ողորմած Փրկիչ—ողորմի և օգնի մեզ։

№ 3. ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո։ Եկեսցէ արքայութիւն Քո։ Եղիցին կամք Քո, որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ։ Զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս։ Ամէն։

Մեր Հայր, որ երկնքում ես, սուրբ լինի քո անունը։ Գայ Քո թագաւորութիւնը։ Լինի Քո կամքը՝ ինչպէս երկնքումը այնպէս էլ երկրիս վրայ։ Մեր ամենօրեայ հացը այսօր տուր մեզ։

Մեր պարտքը թող մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաններին ենք թողնում։ Մի ձգիր մեզ փորձանքի մէջ, այլ ազատիր մեզ չարից։ Որովհետև Քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը յաւիտեանս։ Ամէն։

Այս աղօթքը անուանվում է Տէրունական, որովհետև մեր Տէր Յիսուս Քրիստոսը սովորեցրեց։ Այս աղօթքը սկսվում է կոչումով, բաղկացած է եօթն խնդրուածքներից և վերջանում է փառաբանութիւնով։

Կոչումն է՝ „Հայր մեր, որ յերկինս ես“։ Մենք անուանում ենք Աստուծուն Հայր, ա), որովհետև Նա իր ողորմութիւնով մեզ—քրիստոնեաներիս—որդի անուանեց։ բ), Նա մեզ սիրում է ինչպէս հայր և մեր բոլոր բարի գործերում միշտ օգնում է։ Սրա համար պէտք է դիմենք Նրան սիրով և յոյսով, ինչպէս երեխաներն իրանց հօրը։

Մենք Աստուծուն անուանում ենք Երկնաւոր Հայր այն պատճառով, որ Նա թէև ամեն տեղ է, բայց Իր փառքի աթոռն ունի երկնքում, ուր լինում են սուրբ հրեշտակները։ Բացի այդ՝ յիշեցնում է մեզ, որ աղօթելիս պէտք է թողնենք երկրային բաները և մտածենք միայն երկնային մասին։

Առաջին խնդրուածք.— „Սուրբ եղիցի անուն Քո“։ Աստուծու անունը միշտ սուրբ է, բայց այս խօսքերով մենք խնդրում ենք, որ Նա (անունը) սուրբ լինի և մեր մէջ։ Այս լինում է, երբ մենք Աստուծու խօսքը պահում ենք սուրբ և հետևելով Նրան, ապրում ենք մաքուր սրտով։ Իսկ ով Աստուծու խօսքին հակառակ է սովորեցնում և ապրում, նա անպատվում է Նրա սուրբ անունը մեր մէջ։

Երկրորդ խնդրուածք. — ,,Եկեսցէ արքայութիւն Քո՛՛: Այս խօսքերով մենք խնդրում ենք, որ մեր երկնաւոր Հայրն ուղարկի մեզ Իր Ս. հոգին, որ մենք Նրա շնորհքով հաւատանք Նրա սուրբ խօսքին, ապրենք Նրա կամքի համաձայն և լինենք քրիստոնեաներ ոչ միայն անունով, այլ և կեանքով։

Երրորդ խնդրուածք.— Եղիցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի՛՛: Այս խօսքերով մենք խնդրում ենք Աստուծուն ա), որ Նա օգնէ մեզ կատարելու այս երկրում Նրա սուրբ կամքը այնպէս, ինչպէս հրեշտակները կատարում են երկնքում։ բ). Հեռացնէ մեզանից չար խորհուրդը, և չար կամքը, որոնք հակառակ են Նրա բարի և ողորմած կամքին և չեն թողնում մեզ սուրբ պահել Նրա անունը, և գ), պատրաստականութիւն ենք յայտնում ստանալու Նրանից այն ամենը, ինչ որ Նրան հաճելի կլինի մեզ տալու համար։

Չորրորդ խնդրուածք.— ,,Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր՛՛: Այս խօսքերով մենք խնդրում ենք, որ Աստուած տայ մեզ ամեն օրուայ կարիքոր պիտոյքները մեր գոյութեան համար՝ թէ մարմնաւոր, օր. ուտելիք, խմելիք, հանդերձ, բնակարան. դաշտ, անասուններ, ընտանիք, որդիք, հաւատարիմ, ծառայ, լաւ եղանակ, առատութիւն, խաղաղ կեանք, առողջութիւն, բարի անուն, բարի բարեկամներ, հաւատարիմ հարևաններ և այլն. և թէ հոգևոր, օր. Աստուծու խօսքը—և Քրիստոսի Ս. Մարմնոյ և Արեան հաղորդութիւն։

Հինգերորդ խնդրուածք.— ,,Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Hyo. Armenian Bibliotheca
7/XI-1922
Ասոնիա, Մասնիկեան
ՄՀԱՍՏԻՍՅԱՆ

պարտապանաց՛՛: Այստեղ պարտք՝ նշանակում է մեղք։ Մենք պարտաւոր ենք կատարել Աստուծու պատուիրանները և երբ չենք կատարում, նշանակում է— մեղանում ենք նրան պարտական. իսկ «մեր պարտապաններ» անուանուում են այն մարդիկ, որոնք որև է բանով մեղաւոր են մեր առաջ։ Այս աղօթքի մէջ խնդրում ենք, որ Նա ողորմածաբար ների մեր մեղքերը—պակասութիւնները և խոստանում ենք մենք էլ մեծահոգութիւնով ներել մեր առաջ մեղաւորներին և բարութիւն անել։ Սրանից հետևում է, եթէ մենք չներենք, Աստուածն էլ մեզ չի ներիլ։

Վեցերորդ խնդրուածք.— ,,Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն՛՛: Փորձութիւն անուանվում են կեանքի այն դէպքերը, որոնց ժամանակ կարող ենք մենք ընկնել յուսահատութեան, խաբէութեան, թերահաւատութեան և ուրիշ վատ և արատ բերող մեղքերի մէջ։ Այս փորձութիւնները յառաջ են գալիս մեր մարմնական թուլութիւնից, մարդոց վատ օրինակներից և գայթակղութիւնից։ Մենք խնդրում ենք Աստծուն, որ Նա հեռացնի մեզանից այդպիսի փորձութիւնները։ Բայց եթէ Աստծուն հարկաւոր է փորձութիւններով հաստատել մեր հաւատը և ամրացնել մեզ բարի կեանքի մէջ, այն ժամանակ խնդրում ենք, որ Նա օգնէ մեզ յաղթել նրանց և չընկնել մեղքի մէջ։

Եօթներորդ խնդրուածք.— ,,Այլ փրկեա՛ զմեզ ի չարէ՛՛ Այս խօսքերով մենք խնդրում ենք Աստուծուն, որ նա ազատէ մեզ ամեն տեսակ չարութիւնից, ձախորդութիւններից, դժբաղդութիւններից և պատահած ժա-

ժանակ պաշտպանի մեզ, որ բարի վերջաւորութիւն ունենայ։

Փառաբանութիւն. —„Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս։ Ամէն„։

Այս խօսքերով մենք փառաբանում ենք և յոյս ունենք ստանալու մեր խնդրուածները։ Որովհետև այսպիսի խնդրուածները հաճելի են նրան և լսելի կ՚լինեն։ Նա ինքը պատուիրեց մեզ այսպէս աղօթել և խոստացաւ լսել մեզ։

№ 4. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ԱՌԱՋ

Ամենաբարի Աստուած, առաքեա առ մեզ զշնորհս Հոգւոյդ քո սրբոյ, զի պարգևեսցէ մեզ զմիտս և կազդուրեսցէ զզօրութիւնս հոգւոց մերոց, որպէս զի մենք ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս, զարգասցուք քեզ ստեղծողիդ մերում ի փառս, ի մխիթարութիւն ծնողաց մերոց, յօգուտ եկեղեցւոյ և Հայրենեաց։

Ամենաբարի Աստուած, ուղարկիր դէպի մեզ քո սուրբ Հոգու շնորհը, որ մեզ միտք պարգևէ և զօրացնէ մեր հոգևոր կարողութիւնները, որպէս զի մենք ընդունելով մեզ տուած ուսմունքը, մեծանանք քեզ ստեղծողիդ փառք տալու, մեր ծնողներին մխիթարելու և եկեղեցուն ու Հայրենիքին օգտակար լինելու։

Այս աղօթքով մենք Աստուծուն խնդրում ենք ամենաբարի, որովհետև Նա մեզ համար միշտ բարի է։ ցանկանում և խնդրում ենք, ա), որ Նա ուղարկէ մեզ շնորհք, այն է Սուրբ Հոգու ոյժ, բ), խոստովանում ենք, որ Սուրբ Հոգու շնորհքը տալիս է հոգևոր զօրութիւն, այն է՝ միտք, յիշողութիւն, ուշադրութիւն և զօրացնում է նրանց, որոնք հարկաւոր են ուսումնառութեան ժամանակ և գ), յայտնում ենք, թէ մենք ուսում ենք առնում և մեծանում, որ մեր բարի գործերով մեր Ստեղծողին փառք տանք, մեր ծնողներին մխիթարենք և մեր Եկեղեցուն ու հայրենիքին օգուտ բերենք։

№ 5. ԱՂՕԹՔ ԴԱՍԻՑ ՑԵՏՈՑ

Գոհանամք զՔէն, Արարիչ, զի արժանի արարեր զմեզ շնորհաց Քոց՝ ընդունելութեան ուսմանս։ Օրհնեա զմեծաւորս, զծնողս և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեզ ի գիտութիւն բարութեան և տուր մեզ կարողութիւն ի շարունակութիւն ուսման այսորիկ։

Շնորհակալ ենք Քեզանից, Արարիչ, որ քո սուրբ շնորհով արժանացրիր մեզ ուսմունք ստանալու։ Օրհնիր մեր մեծաւորներին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք առաջնորդում են մեզ բարի բաներն իմանալու։ Եւ տուր մեզ կարողութիւն՝ շարունակելու այս ուսումը։

Այս աղօթքով մենք դառնում ենք դէպի մեր Արարիչ Աստուածը և շնորհակալութիւն ենք յայտնում Նրան,

որ Իր ողորմութիւնով մեզ արժանացրեց ուսում ստանալու. ապա խնդրում ենք, ա), որ Նա օրհնի մեր մեծերին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք օգնում են մեր ուսման և առաջնորդում են մեզ դէպի բարին և բ), որ տայ մեզ ոյժ և կարողութիւն, որպէս զի այսուհետև էլ շարունակենք մեր ուսումը։

№ 6. ԱՂՕԹՔ ՀԱՇԻՑ ԱՌԱՋ

Աչք ամենեցուն ի Քեզ, Տէր, յուսան և Դու տաս զկերակուր նոցա ի ժամու. բանաս զձեռն Քո և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամօք Քովք։

Ամենքի աչքերը դէպի քեզ են նայում, Տէր և Դու տալիս են նրանց կերակուր ժամանակին. բաց ես անում Քո ձեռքը և լիացնում ես ամենքին Քո ողորմութիւնով։

Այս աղօթքով մենք դարձնում ենք մեր աչքերը Աստուծուն, խոնարհանում և ընդունում ենք, որ Նա մեր Տէրն է և ինչպէս հայր, ամեն ժամանակ հոգում է մեր մարմնական կերակրի մասին։ Ընդունում ենք նաև, որ Նա ողորմած է և ամենքին իր ողորմութիւնով տալիս է, ինչ որ հարկաւոր է։

№ 7. ԱՂՕԹՔ ՀԱՇԻՑ ՑԵՏՈՑ

Տէր Յիսուս, լցաք ի բարութեանց Քոց։ Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ,

Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Զլիութիւն սեղանոյս անհատ և աննուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց և լիացոյց՝ Նմա փառք յաւիտեանս. Ամէն։

Տէր Յիսուս, լիացանք Քո բարութիւնով. Ուրեմն շնորհակալ լինենք մեր տէր Աստուծուց—Հօրից, Որդուց և Սուրբ Հոգուց։ Մեր Քրիստոս Աստուածը, որ մեզ կերակրեց և լիացրեց, թող անպակաս անէ այս սեղանի լիութիւնը։ Նրան է վայելում փառք յաւիտեանս։ Ամէն։

Այս աղօթքով մենք նախ՝ շնորհակալութիւն ենք անում մեր Տէր Յիսուս Քրիստոսին այն բանի համար, որ նա մեզ կերակրեց Իր երկրաւոր բարիքներով և ապա շնորհակալութիւն անելով և փառք տալով սուրբ Երրորդութեանը՝ խնդրում ենք, որ միշտ անպակաս անի սեղանից իր ողորմութիւնը։

№ 8. ԱՂՕԹՔ (ԺԱՄԱՄՈՒՏ) ՔՐԻՍՏՈՍԻ ՑԱՐՈՒԹԵԱՆ

Քրիստոս յարեաւ ի մեռելոց՝ մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց, Նմա փառք յաւիտեանս։ Ամէն։

Քրիստոս յարութիւն առաւ մեռելներից, իր մահով մահուան յաղթեց և իր յարութիւնով մեզ կեանք տուեց. Նրան յաւիտենական փառք։ Ամէն։

Այս աղօթքով մենք խոստովանում ենք և ընդունում ա), որ Քրիստոսը յարութիւն առաւ մեռելներից, այսինքն թէև նա մեռաւ մարմնով, բայց երրորդ օրը կենդանացաւ, և բ), Նա իր մեռնելով մահը ոչնչացրեց և ցոյց տուեց, որ մենք ևս, յոյսով մեռնելով, դարձեալ պէտք է կենդանանանք, յարութիւն առնենք, և դորանով Նա մեզ նոր կեանքի արժանացրեց։

№ 9. ԱՂՕԹՔ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԱՄԱՐ

Տէր Աստուած մեր, կեցո զամենաբարեպաշտ թագաւորն և զԿայսրն ամենայն Ռուսաց զՆիկոլայ Ալէքսանդրովիչն։ Զօրացո զնա, օգնեա զաւակաց և զօրաց Նորա՝ պահելով զամենեսին ի խաղաղութեան։

Տէր Աստուած մեր, կեանք տուր ամենաբարեպաշտ թագաւորին և ամենայն Ռուսաց Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչին. Զօրացրու Նրան, օգնիր Նրա զաւակներին և զօրքերին և ամենքին պահպանիր խաղաղութեան մէջ։

Այս աղօթքով մենք խնդրում ենք մեր Տէր Աստուծուն, թագաւորների թագաւորին, որ նախ՝ կեանք տայ ամենայն Ռուսաց ամենաբարեպաշտ թագաւոր-Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչին. երկրորդ՝ զօրացնի Նրան իր թշնամիների դէմ, երրորդ՝ օգնի Նրա զաւակներին և զօրքերին, և չորրորդ՝ Նրա հովանաւորութեան տակ գտնուած բոլոր ժողովրդին պահպանի խաղաղութեան մէջ։

№ 10. ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Անկանիմք առաջի Քո, սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանարատ զԿոյսդ։ Բարեխօսեա վասն անձանց մերոց և աղաչեա զմիածին Որդիդ, փրկեալ զմեզ ի փորձութիւնէ և յամենայն վտանգից մերոց։

Ընկնում ենք Քո առաջ, սուրբ Աստուածածին և աղաչում ենք անարատ Կուսիդ։ Բարեխօսիր մեզ համար և խնդրիր Քո Միածին Որդուն, որ փրկէ մեզ փորձանքից և ամեն տեսակ վտանգներից։

Այս աղօթքի մէջ մենք տուրբ Կոյս Մարիամին անուանում ենք ա), Աստուածածին, որովհետև Նա ծնաւ Յիսուսին, որ էր Աստուած և մարդ, անարատ, որովհետև Նա սուրբ էր, մեղք չունէր. բ), ընկնելով և երկրպագանելով Նրան՝ խնդրում ենք, որ բարեխօսի մեզ համար և աղաչի իր Միածին Որդուն, որ փրկէ մեզ ամեն տեսակ փորձանքներից և մեզ վրայ գալիք վտանգներից. գ), Միածին ենք անուանում Յիսուսին, որովհետև Աստուած բացի Նրանից ուրիշ որդի չունի ըստ էութեան, ինչպէս սուրբ Կոյս Մարիամն էլ ուրիշ որդի չունի ըստ մարդկութեան։

№ 11. ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ

Գոհանամք զՔէն. Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ ի հանգստենէ քնոյ

շնորհիւ ողորմութեան Քո։ Զարթո՛ զմիտս մեր արդարութեամբ առ Քեզ, Տէ՛ր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն Քո, եկեսցէ և բնակեսցի առ մեզ Աստուածութիւն Քո և ողորմութիւն Քո հովանի և պահապան լիցի ի վերայ պաշտօնէից Քոց։ Եւ զմեզ զծառայսս Քո արժանի արա ի տուէ և ի գիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ ի սէր պատուիրանաց Քոց և գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Շնորհակալ ենք Քեզանից, Տէր Աստուած մեր, որ Քո ողորմութեան շնորհիւ զարթեցրիր մեզ քնած տեղից։ Զարթեցրու մեր միտքը արդարութիւնով դէպի Քեզ, Տէր Աստուած մեր, որ մեր աչքերը տեսնեն Քո փրկութիւնը, գայ և բնակուի մեր մէջ Քո Աստուածութիւնը և Քո ողորմութիւնը հովանի և պահապան լինի քո ծառաների վրայ։ Եւ մեզ՝ ~~ծառաներիս էլ արժանի արա գիշեր~~ և ցերեկ և ամեն ժամանակ Քո պատուիրանների վրայ մտածել և շնորհակալութիւնով փառաւորել Հօրը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և յաւիտեանս։ Ամէն։

Այս աղօթքով մենք շնորհակալութիւն ենք յայտնում մեր Տէր Աստուածուն, որ Նա իր ողորմութիւնով զարթեցրեց մեզ քնից. յետոյ խնդրում ենք—1), որ Նա զարթեցնի և մեր մտաւոր աչքերը, որ տեսնենք Նրա մեզ

տուած բարիքներն ու ողորմութիւնը. 2), որ մաքուր պահենք մեր սիրտը, որ Աստուած գայ և բնակուի նրա մէջ և՝ տեսնելով մեր բարի գործերը՝ ողորմի և պահպանի մեզ ամեն տեսակ փորձանքներից և 3), որ միտք, կարողութիւն և շնորհք տայ մեզ, որ ամեն ժամանակ Նրա պատուիրանները աչքի առաջ ունենանք ու կատարենք և՝ հասկանալով մեր որդիական պարտականութիւնները, փառք տանք և շնորհակալ լինենք Նրանից։

№ 12. ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Տէր Աստուած մեր, Դու պահեա զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի. ընդ սուրբ երկիւղ Քո բևեռեալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր, որպէս զի յամենայն ժամ Քեզ պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն և Քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Տէր Աստուած մեր, Դու պահիր մեզ խաղաղութիւնով այս գիշեր և ամեն ժամանակ։ Քո սուրբ երկիւղիդ մէջ հաստատ պահիր մեր միտքը և խորհուրդը, որ ամեն ժամանակ անփորձ և ազատ լինենք թշնամու որոգայթից։ Եւ Քեզ—Հօրդ, Որդուդ և Սուրբ Հոգուդ—տանք օրհնութիւն և փառք այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, Ամէն։

Այս աղօթքով մենք՝ Աստուծուն Տէր անուանելով, խնդրում ենք. 1), որ մեզ խաղաղութեան մէջ պահի թէ գիշեր և թէ ամեն ժամանակ. 2), մեր միտքը և խորհուրդը Իր սուրբ երկիւղի մէջ պահի, որ կարողանանք անվտանգ պահպանուել թշնամու որոգայթից և 3), խոստանում ենք միշտ օրհնութիւն և փառք տալ Սուրբ Երրորդութեան։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ

ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

№ 1. ՄԱՐԻԱՄ ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Նազարէթ քաղաքում կենում էին երկու բարեպաշտ ամուսիններ՝ Յովակիմ և Աննա։ Երկուսն էլ Դաւթի ցեղից էին։ Նրանք որդի չունէին և այս բանը շատ էր տրտմեցնում նրանց։ Այս պատճառով նրանք իրանց աղօթքի մէջ խնդրում էին Աստուծուն, որ մի որդի տայ և ուխտ դրեցին—եթէ Աստուած կատարի նրանց խնդիրը, ընծայեն նրան Աստուծուն։ Աստուած լսեց նրանց աղօթքը և տուեց մի աղջիկ։ Նրան անուանեցին Մարիամ։

Այս տօնը կատարվում է Սեպտ. 8-ին։

№ 2. ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԾԱՑՈՒՄՆ ՏԱՃԱՐԻՆ

Երբ Սուրբ Կոյս Մարիամ երեք տարեկան դարձաւ, ծնողները տարան Նրան Երուսաղէմ՝ Աստուծուն ընծայելու։ Քահանայապետն ընդունեց Նրան և օրհնեց։ Տաճարի շուրջը շատ բնակարաններ կային, որտեղ կենում էին բարեպաշտ այրիներ, կոյսեր և Աստուծուն նուիրուած մանուկներ։ Այստեղ Յովակիմ և Աննան թողին Մարիամին։ Մարիամը մեծանում էր և պարապում էր աղօթքով, Սուրբ Գիրքը կարդալով և ձեռագործով։

Այս տօնը կատարվում է Նոյեմբերի 21-ին։

№ 3. ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԱՌԵՏՈՒՄԸ

Սուրբ Կոյս Մարիամը դեռ տաճարումն էր, որ Նրա ծնողները վախճանուեցան. Նա մնաց որբ։ Երբ Նա 14 տարեկան դարձաւ, Նրա դաստիարակները կամեցան Նրան ամուսնացնել, բայց Նա ասաց, որ ուխտել է Աստուծուն—միշտ կոյս մնալ։ Այն ժամանակ քահանաները յանձնեցին Նրան իր ազգական ծերունի Յովսէփին, որին յայտնեցին և Սուրբ Կոյս Մարիամի ուխտը։

Ծերունի Յովսէփը հիւսն էր և բնակվում էր Գալիլիայի Նազարէթ քաղաքում: Սուրբ Կոյս Մարիամը գնաց նրա տուն և բնակուեց այնտեղ:

Մի անգամ, երբ Սուրբ Կոյս Մարիամն աղօթում էր, Գաբրիէլ հրեշտակապետն երևաց նրան և ասաց. «Ուրախացիր Մարիամ, Տէրը քեզ հետ է. օրհնուած ես Դու կանանց մէջ: Սուրբ Հոգին կգայ Քո վերայ և Բարձրեալի (Աստուծու) զօրութիւնը հովանի կլինի Քեզ: Դու Որդի կունենաս և կանուանես Նրան Յիսուս: Նա կը լինի Մեծ և Բարձրեալի Որդի կը կոչուի: Աստուած կը տայ Նրան Դաւթի աթոռը և Նրա թագաւորութիւնը վերջ չի ունենալ: Սուրբ Կոյս Մարիամը խոնարհութիւնով պատասխանեց. «Թող այդպէս լինի»: Հրեշտակը հեռացաւ:

Այս ոճնը կատարվում է ապրիլի 7-ին:

№ 4. ԲՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Քրիստոսի ծննդեան ժամանակ Օգոստոս Կայսրը կամեցաւ աշխարհագիր անել: Նա հրամայեց, որ իւրաքանչիւր հրէայ գնայ

իր հայրենի քաղաքը: Յովսէփը և Ս. Կոյս Մարիամը Դաւթի ցեղից էին և գնացին Նազարէթից Բեթղեհէմ: Նրանք քաղաքի մէջ իջնելու տեղ չը գտան և բնակուեցան մի այրի մէջ, որտեղ հովիւները պահում էին իրանց ոչխարները ցուրտ և անձրևային եղանակներին: Այդ այրի մէջ գիշերը Սուրբ Կոյս Մարիամը ծնաւ իր Միածին Որդի Յիսուսին: Նա փաթաթեց Նրան խանձարրում և դրեց մսուրի մէջ:

Այդ գիշեր Բեթղեհէմցի հովիւները պահում էին իրանց ոչխարները դաշտում: Տիրոջ հրեշտակն երևաց նրան և ասաց. Մի՞ վախենաք, ես աւետում եմ ձեզ մեծ ուրախութիւն.—Դաւթի քաղաքի մէջ ձեզ համար Փրկիչ ծնաւ: Եւ այս կը լինի ձեզ նշան,—դուք կը գտնէք Մանուկին խանձարրում փաթաթած և մսուրի մէջ դրած»: Այդ միջոցին յանկարծ շատ հրեշտակներ երևեցան երկնքում և սկսեցին երգել. «Փառք Աստծուն երկնքումը, երկրի վրայ խաղաղութիւն և մարդկանց մէջ ուրախութիւն»: Երբ հրեշտակները վերացան երկինք, հովիւները գը-

նացին և՝ ինչպէս հրեշտակն ասել էր, գըտան Մանուկին խանձարրում փաթաթած և մսուրի մէջ դրած։ Երկրպագութիւն տուին և յետ դարձան։

Այս ոտնը կատարվում է Յունվարի 6-ին։

№ 5. ՏԵԱՌԸՆԴԱՌԱՋ

Հրէաները Մովսէս մարգարէի օրէնքով իրանց արու անդրանիկ զաւակներին՝ ծնընդից յետոյ՝ քառասներորդ օրը, տանում էին Երուսաղէմի տաճարը, որ Տիրոջը ներկայացնեն։ Նրանք այս պարտաւորութիւնը կատարելիս մատուցանում էին և զոհ, հարուստներն արջառ կամ գառը, իսկ աղքատները—մի զոյգ տատրակ կամ աղաւնի։

Երբ Յիսուս քառասուն օրական դարձաւ, Մարիամ Սուրբ Կոյսը և Յովսէփը տարան Նրան Երուսաղէմի տաճարը։ Նրանք իրանց հետ վերցրին մի զոյգ աղաւնի։ Այդ միջոցին Երուսաղէմում կենում էր մի ծերունի արդար մարդ, Սիմէոն անունով։ Սուրբ Հոգին յայտնել էր Նրան, որ Նա չի մեռնիլ, մինչև Քրիստոսին չտեսնի։ Երբ Մանուկին բերին տաճար, Սիմէոնը Սուրբ Հոգով իմացաւ։ Նա դուրս եկաւ Մանուկի առաջ, գիրկն առաւ Նրան, փառք տուեց Աստուծուն և ասաց. «Տէր այժմ Քո խոսքիդ համեմատ արձակիր Քո ծառայիդ, որովհետև իմ աչքերը տեսան Փրկչին, Որին պատրաստեցիր ժողովրդի համար»։ Յովսէփը և Մարիամը զարմանում էին այս խոսքերի վրայ։ Տաճարում կար և մի կին՝ Աննա անունով։ Սա մարգարէուհի էր։ Սա էլ փառաբանում էր Աստուծուն և ամենին ասում, թէ այս մանուկը խոստացեալ Փրկիչն է.

Այս ոտնը կատարվում է Փետրվարի 14-ին։

№ 6. ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Յորդանան գետի ափի մօտ բնակվում էր մի մարգարէ՝ Յովհաննէս անունով։ Նա քարոզում էր ժողովրդին և ասում. «Ապաշխարեցէք, մօտեցել է երկնքի արքայութիւնը (Քրիստոս)»։ Նրա մօտ գալիս էին ամեն կողմից մարդիկ և՝ որոնք իրանց մեղքերը խոստովանում էին, Յովհաննէսը մկրտում էր նրանց Յորդանանի մէջ։

Երբ Յիսուս երեսուն տարեկան դարձաւ, Նազարէթից եկաւ Յովհաննէսի մօտ՝ մկրը-

տուելու։ Յովհաննէսը հրաժարուեց Նրան մկրտելուց և ասաց. «Ես պէ՞տք է Քեզանից մկրտուեմ, Դու ինձ մօտ ե՞ս գալիս»։ Բայց Յիսուս պատասխանեց. «Թո՛յլ տուր, որովհետև այսպէս պէտք է կատարուի ամեն արդարութիւն»։ (Այսինքն՝ դու պէտք է մկրտես ինձ))։ Յովհաննէսը թոյլ տուեց։ Երբ Յիսուս մկրտուեց, շուտով դուրս եկաւ ջրից. երկինքը բացուեց և Սուրբ Հոգին աղաւնու կերպարանքով իջաւ Նրա վրայ։ Երկնքից էլ ձայն լսուեց, թէ «Դա է իմ սիրելի Որդին, Որին ես հաւանեցի»։

Այս տօնը կատարվում է Յունվարի 6-ին։

№ 7. ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Յիսուս կամեցաւ ցոյց տալ իւր Աստուածային փառքն իւր աշակերտներին։ Նա վերառաւ իւր հետ Պետրոսին, Յակովբոսին և Յովհաննէսին, բարձրացաւ թափոր լեառը և սկսեց աղօթել։ Աշակերտները յոգնած լինելով՝ քնեցան։ Երբ զարթեցան, տեսան, որ իրանց վարդապետը կերպարանափոխուել է։ Նրա երեսը փայլում է ինչպէս արեգակ և շորերն սպիտակ են ինչպէս ձիւն.

Նրա հետ խօսում էին Մովսէս և Եղիա մարգարէները։ Պետրոսը հիացած այս բանից՝ բացականչեց. «Վարդապետ, լաւ է մեզ այստեղ լինել. շինենք երեք տաղաւար, մինը՝ Քեզ, մինը՝ Մովսէսին և միւսը՝ Եղիային»։ Այն ժամանակ մի լուսաւոր ամպ եկաւ և հովանի եղաւ Նրանց։ Ձայն եկաւ ամպից, որ ասում էր. «Դա է իմ սիրելի որդին, Դրան լսեցէք»։ Աշակերտներն այս ձայնից սաստիկ վախեցան և վայր ընկան երեսների վրայ։ Յիսուս մօտեցաւ նրանց, զարթեցրեց և ասաց. «Կանգնեցէք և մի վախենաք»։ Նրանք բարձրացրին իրանց գլուխներն և տեսան միայն Յիսուսին իւր սովորական կերպարանքով։

Այս տօնը կատարվումէ ամառը՝ Յունիս կամ Յուլիս ամսին՝ կիւրակի օր։

№ 8. ԾԱՂԿԱԶԱՐԴ

Հրէաներն ամեն տարի կատարում էին Եգիպտոսից դուրս գալու տօնը, որ կոչվում էր Զատիկ։ Այդ տօնից վեց օր առաջ Յիսուս եկաւ Բեթանիա գիւղը և այնտեղից ճանա-

պարհ ընկաւ դէպի Երուսաղէմ։ Նրա յետեւից գնում էր մեծ բազմութիւն։ Երբ նա հասաւ Ձիթենեաց սարը, հրամայեց իր աշակերտներից երկուսին, որ մօտակայ գիւղից մի աւանակ բերեն։ Աշակերտները բերին աւանակը, փռեցին նրա վրայ իրանց շորերը և Յիսուս նստեց։ Զատերը հաւատացին, որ Յիսուս Դաւթի ցեղից խոստացած Փրկիչն է և սկսեցին պատուել Նրան։ Ոմանք արմաւենու ճիւղեր էին կտրում և ճանապարհի վրայ ձգում. ոմանք էլ իրանց շորերը աւանակի ոտքերի տակն էին փռում և այս երգն երգում. «Ովսաննա Դաւթի Որդուն, օրհնուած է Տիրոջ անունով եկող Թագաւորը, Ովսաննա բարձրումը»։ (փրկիր, տուր բաղդաւորութիւն, որ բնակում ես բարձրում—երկնքում)։ Քաղաք մտնելու ժամանակ մեծ բազմութիւն դուրս եկաւ Քրիստոսի առաջ և ով Նրան չէր տեսել, հարցնում էր. «Ո՞վ է Սա»։ Ժողովուրդը պատասխանում էր.—Սա է Յիսուս, Նազարէթ քաղաքի Մարգարէն։

Այս ոճնը կատարվում է Զատկից մի շաբաթ առաջ։

№ 9. ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ

Բաղարջակերաց տօնի առաջին օրը՝ Յիսուս իւր աշակերտներից երկուսին ասաց, որ Երուսաղէմում մի տան մէջ պատրաստութիւն տեսնեն Զատիկը տօնելու համար։ Աշակերտները պատրաստեցին, ինչպէս Յիսուս հրամայել էր։

Երեկոյեան Յիսուս իւր աշակերտներով մտաւ պատրաստուած վերնատունը։ Նա ընթրիքից առաջ իւր աշակերտների ոտքերը լուաց՝ խոնարհութեան օրինակ տալով նրանց։ Յետոյ նստեց սեղան նրանց հետ և կերաւ զատկական գառը։ Խօսակցութեան ժամանակ Յիսուս ասաց իւր աշակերտներին. «Ձեզանից մէկը պէտք է մատնէ Ինձ»։ Նրանք տարակուսած նայեցին իրար երեսի և սկսեցին երկիւղով մէկ մէկ հարցնել. «Միթէ՞ ես եմ, Տէր»։ Յուդան էլ, որ պէտք է մատնէր, ասաց. «Միթէ՞ ես եմ»։ Յիսուս պատասխանեց. «Դու ես»։ Յուդան իսկոյն դուրս գնաց։

Ընթրիքն ուտելիս Յիսուս վեր առաւ

հաց, օրհնեց, կոտրեց և տուեց աշակերտներին ու ասաց. «Առէք, կերէք, այս է իմ մարմինը։ Այս արէք իմ յիշատակի համար»։ Յետոյ առաւ բաժակը, գոհացաւ և տուեց նրանց ու ասաց. «Խմեցէք դրանից ամենքդ, այս է իմ Նոր-ուխտի արիւնը, որ շատերի մեղքերի թողութեան համար թափվում է։ Ամեն անգամ երբ խմէք այս բաժակից, յիշեցէք ինձ»։ Այսպէս հաստատեց Յիսուս հաղորդութեան Ս. խորհուրդը։

Այս ոճնը կատարվում է Զատկից երեք օր առաջ։

№ 10. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Զատկի տօնից մի քանի օր առաջ Յիսուս եկաւ Երուսաղէմ։ Նրա թշնամիները— հրէաների քահանայապետները, կարդացողները և ժողովրդի ծերերը հաւաքուեցան և խորհուրդ արին, որ սպանեն։ Նրանք բռնեցին Յիսուսին և տարան Պիղատոսի մօտ, որ երկրի կառավարիչն էր, և սկսեցին բամբասել ու չարախօսել Նրա մասին, թէ նա քարոզում և մոլորեցնում է ժողովրդին, Ինքն Իրան Աստուծու Որդի է անուանում

և արգելում է հարկ տալ Կայսեր։ Պիղատոսը հրամայեց խաչել Յիսուսին։

Զինուորները տարան Յիսուսին Գողգոթա։ Հանեցին Նրա շորերը և խաչեցին։ Նրա աջ ու ձախ կողմն էլ խաչեցին երկու աւազակներ։ Յիսուսի խաչի վրայ գրուած էր. «Յիսուս Նազովրեցի Թագաւոր հրէից»։ Ամենքը ծաղրում էին Նրան, բայց Նա աղօթում էր խաչի վրայ, որ Աստուած ներէ Նրանց արածը։

Երբ Յիսուսին խաչեցին, առաւօտեան ժամը ինն էր։ Տասներկու ժամին երկրիս երեսը խաւար պատեց և աստղերն երևեցան։ Ժամը երեքին Յիսուս աղաղակեց. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչու թողեցիր Ինձ». և մի փոքր ժամանակից յետոյ էլ ասաց. «Ծարաւ եմ»։ Զինուորներից մէկը սպունգը թաթախեց քացախի մէջ և եղեգի ծայրով մօտեցրեց Նրա բերանին։ Յիսուս քացախն ընդունեց և ասաց. «Հայր, Քո ձեռք եմ ուանդում իմ հոգին»։ Յետոյ գլուխը խոնարհեցրեց և ուանդեց հոգին։

Այս ժամանակ արեգակը խաւարեց, եր-

կիրը շարժուեց և տաճարի վարագոյրը պատռուեց...։ Ներկայ եղող հարիւրապետը և ժողովուրդը տեսնելով այս՝ ասացին. «Արդարև Սա Աստուծոյ Որդի էր»։

Այս տօնը կատարւում է Աւագ Ուրբաթ օրը։

№ 11. ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Յովսէփ Արեմաթացին, որ Յիսուսի ծածուկ աշակերտն էր, եկաւ Պիղատոսի մօտ և խնդրեց, որ թոյլ տայ իրան Յիսուսի մարմինը խաչից իջեցնել ու թաղել։ Պիղատոսը, երբ ստուգեց, որ Յիսուս մեռել է, թոյլ տուեց։

Գողգոթա եկաւ Նիկոդիմոսն էլ, որ նոյնպէս Յիսուսի ծածուկ աշակերտն էր։ Յովսէփը պատրաստեց մաքուր կտաւ, իսկ Նիկոդիմոսը բերեց հարիւր լիտրի չափ անուշահոտ իւղ։ Գողգոթայի մօտ Յովսէփն ունէր մի պարտէզ և այդ պարտիզի մէջ կար մի այր։ Յովսէփը և Նիկոդիմոսը իջեցրին խաչից Յիսուսի մարմինը, օծեցին և պատեցին կտաւով և դրեցին այրի մէջ, իսկ գերեզմանի դուռը ծածկեցին մի մեծ քարով ու գնացին։

Հրեաների քահանայապետներն եկան Պիղատոսի մօտ և խնդրեցին զինուորներ կանգնեցնել Յիսուսի գերեզմանի մօտ, որ պահպանեն գերեզմանը, որպէսզի Յիսուսի աշակերտները գիշերը չը գողանան Նրա մարմինը և չը տարածեն ժողովրդի մէջ, թէ Նա յարութիւն առաւ։ Պիղատոսը հրամայեց զգուշանալ։ Նրանք գնացին, կնքեցին գերեզմանի քարը և պահապաններ կանգնեցրին։

Այս տօնը կատարւում է Աւագ-Ուրբաթ օրը։

№ 12. ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ—ՀԱՏԻԿ

Կիրակի առաւօտեան վաղ Քրիստոսի գերեզմանի մօտ մի մեծ շարժ եղաւ։ Տիրոջ հրեշտակն երկնքից իջաւ, գերեզմանի քարը մի կողմը գլորեց և նստեց Նրա վրայ։ Նրա երեսը փայլակի նման էր և շորերը ձիւնի նման սպիտակ։ Այդ ժամանակ Յիսուս յարութիւն առաւ մեռելներից։ Պահապանները տեսնելով այս՝ երկիւղից գետին ընկան— ինչպէս մեռածներ։ Եւ երբ ուշքի եկան, գնացին, պատմեցին, ինչ որ պատահել էր։

Այս ժամանակ Գալիլիացի կանայք— Մարիամ Մագդաղենացին, Մարիամ Յա-

կովբեանը, Սողոմէն և ուրիշներն եկան Յիսուսի գերեզմանի մօտ, որ օծեն նրա մարմինը։ Նրանք մտան պարտէզ և տեսան, որ քարը գլորած է գերեզմանից։ Մարիամ Մագդալինացին երկիւղից վազեց քաղաք և պատմեց Յիսուսի աշակերտներին։ Միւս կանայք մօտեցան այրին և տեսան երկու հրեշտակ, որոնք ասեցին, թէ Քրիստոս յարութիւն առաւ մեռելներից։

Այս օրը կատարվում է ս. Զատկին։

№ 13. ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Քրիստոսի յարութեան քառասներորդ օրը՝ աշակերտները հաւաքուեցան վերնատան մէջ։ Քրիստոս վերջին անգամ երևաց նրանց և ասաց. «Դուք Երուսաղէմից չը հեռանաք, այլ սպասեցէք Ս. Հոգու գալստեան։ Նա մի քանի օրից յետոյ կիջնի ձեր վերայ և դուք կստանաք զօրութիւն վկայելու իմ մասին»։ Այս ասելով տարաւ նրանց Զիթենեաց սարը և այնտեղ պատուիրեց գնալ քարոզել ժողովրդին և մկրտել «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։ Ապա բարձրացնելով իւր

ձեռքերը՝ օրհնեց նրանց և համբարձաւ երկինք։ Աշակերտները երկրպագութիւն տուին և ուրախութիւնով յետ դարձան Երուսաղէմ։

Այս օրը կատարվում է Զատկից 40 օր յետոյ։

№ 14. ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Քրիստոսի Համբարձումից յետոյ աշակերտները մնացին Երուսաղէմում։ Նրանք ժողովուած էին միասին վերնատան մէջ, անց էին կացնում իրանց ժամանակն աղօթքով և անհամբերութիւնով սպասում էին մխիթարիչ Սուրբ Հոգուն։ Զատկից յետոյ, յիսուներորդ օրը, առաւօտեան ինն ժամին յանկարծ լսուեց մի ձայն՝ սաստիկ հողմի նման և լցրեց բոլոր տունը։ Աշակերտների իւրաքանչիւրի գլխին հրեղէն լեզուներ երևեցան և ամենքը լցուեցան Ս. Հոգով ու սկսեցին խօսել զանազան լեզուներով։ Այսպէս Ս. Հոգին իջաւ նրանց վրայ և տուեց զօրութիւն և շնորք քարոզելու և բժշկելու։

Այս օրը կատարվում է 10 օր Համբարձումից յետոյ։

№ 15. ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ

Սուրբ Կոյս Մարիամը 16 տարի ապրեց Յիսուսի Համբարձումից յետոյ։ Նա բնակվում

էր Երուսաղէմում Յիսուսի սիրելի աշակերտ Յովհաննէսի մօտ։ Մեռնելուց առաջ Նա ցանկացաւ տեսնել Յիսուսի աշակերտներին, որոնք գնացել էին զանազան երկիրներ՝ քարոզելու Ս. Աւետարանը։ Բոլոր առաքեալները, բացի Բարդուղիմէոսից, եկան Երուսաղէմ և տեսան Նրա երանական վախճանը։ Նրանք վառած լապտերներով և սաղմոս ասելով տարան Աստուածամօր մարմինը Գեթսեմանի պարտէզ և այնտեղ մէկ այրի մէջ ամփոփեցին։ Թաղման երրորդ օրն եկաւ Բարդուղիմէոս առաքեալը։ Սրա խնդիրքով առաքեալները բաց արին այրը, որի մէջ ամփոփուած էր Տիրամօր մարմինը, բայց չը գտան Նրան այնտեղ։ Նա վերափոխուել էր։

Այս ոտնը կատարվում է օգոստոսին։

№ 16. Ս. ԽԱՉԻ ԳԻՒՏԸ

Կոստանդիանոս մեծ Թագաւորի մայրը — բարեպաշտ Հեղինէ Թագուհին՝ 326 թուին գնաց Երուսաղէմ և այցելեց Սուրբ Տեղերը, որտեղ Փրկիչը ծնուել, քարոզել, չարչարուել և խաչուել էր։ Նա ցանկացաւ գտնել այն Խաչը, որի վրայ Յիսուս բարձրացել էր։

Փրկչի Խաչը քրիստոնեաների հալածանքների ժամանակ աւազակների խաչերի հետ թաղել էին հողի տակ Գողգոթա սարի վրայ և վրան Հռոմայեցիներն առանձին կռատուն էին շինել։ Այդ բանը յայտնեց մի ծերունի հրէայ, Յուդա անունով։ Թագուհու հրամանով իսկոյն քանդեցին կռատունը, փորեցին և երևեցան երեք խաչերն ու Պիղատոսի գրած տախտակը։ Բայց որովհետև յայտնի չէր, թէ որն է նրանցից Փրկչական Խաչը. ուստի սկսեցին ջերմեռանդութիւնով աղօթել, որ Աստուած ցոյց տայ։ Աղօթքի ժամանակ խաչերը՝ մէկը միւսից յետոյ, դրեցին մի ննջեցեալի վերայ։ Երրորդ խաչը դնելիս ննջեցեալը յարութիւն առաւ։ Ժողովուրդը սկսեց երկիւղածութիւնով համբուրել Քրիստոսի Կենարար Խաչը։ Բայց որովհետև բոլոր ներկայ եղողները չը կարողացան մօտենալ և մինչև անգամ տեսնել, ուստի Երուսաղէմի Մակարիոս Պատրիարքը կանգնեց մի բարձր տեղ և բարձրացրեց Սուրբ Խաչը։ Ժողովուրդը ծունկ չոքեց Փրկչական Խաչի առաջ և երկրպագութիւն տուեց։

Այս ոտնը կատարվում է Հոկտեմբեր ամսին։

№ 17. ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ ԵՒ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

Քրիստոսի Համբարձումից յետոյ՝ Թադէոս առաքեալը, որ Յիսուսի աշակերտներից մէկն էր, եկաւ Հայաստան Եդեսիա քաղաք՝ Աբգարի մօտ։

Նա բժշկեց Աբգարին և քարոզեց քրիստոնէական հաւատը։ Աբգար թագաւորը և Եդեսիա քաղաքի բոլոր բնակիչներն ընդունեցին քրիստոնէութիւնը և մկրտուեցան։

Աբգարի մահից յետոյ թագաւոր դարձաւ նրա քրոջ որդի Սանատրուկը։ Սա ուրացաւ քրիստոնէութիւնը և սկսեց հալածել ու նահատակել քրիստոնեաներին։

Այս ժամանակ նահատակուեցան Թադէոս առաքեալը և Սանդուխտ կոյսը, որ Սանատրուկի աղջիկն էր. սա չուրացաւ քրիստոնէութիւնը։

Ս. Թադէոսից յետոյ եկաւ Հայաստան Ս. Բարթուղիմէոս առաքեալը, որ նոյնպէս Յիսուսի աշակերտ էր, և քարոզեց Քրիստոսի Աւետարանը։ Սրան էլ Սանատրուկը նահատակել տուեց։

Ս. Թադէոս և ս. Բարթուղիմէոս առաքեալները մեր երկիրը լուսաւորեցին քրիստոնէական հաւատի լուսով. սրա համար նրանք կոչվում են Հայաստանի առաջին լուսաւորիչներ։

Այս տօնը կատարվում է Նոյեմբերի վերջին կամ Դեկտեմբերի սկզբին շաբաթ օրը։

№ 18. ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը հայ իշխան Անակ Պահլաւունու որդին էր։ Նա ծնաւ Վաղարշապատ քաղաքում։ Անակը կրօնով հեթանոս էր։

Անակի մահից յետոյ Ս. Գրիգորի դայեակ Սոփիան, որ մի բարեպաշտ քրիստոնեայ էր, տարաւ մանուկին Կեսարիա քաղաք, մկրտել տուեց և անուանեց Գրիգոր։ Ս. Գրիգորը մեծացաւ Կեսարիայում և կրթվեց քրիստոնէական հոգով։

Երբ Ս. Գրիգորն իմացաւ, որ իւր հայրը Անակը սպանել է Հայոց Խսրով թագաւորին և նրա որդին՝ Տրդատը գտնվում է Հռոմ քաղաքում, գնաց նրան ծառայելու, որ հօր մեղքը քաւէ։

Տրդատը Թագաւոր դարձաւ և եկաւ Հայաստան։ Նա շնորհակալութեան զոհ բերեց Հայոց Անահիտ դիցուհուն և Ս. Գրիգորին էլ հրամայեց, որ ծաղկեայ պսակ դնի արձանի գլխին։ Ս. Գրիգորը չկատարեց Թագաւորի հրամանը և ասաց, որ ինքը քրիստոնեայ է։

Թագաւորը շատ բարկացաւ և շատ չարչարանքներ տուեց. բայց նա հաւատը չուրացաւ։ Տրդատը հրամայեց ձգել նրան մահապարտների գուբը (խորվիրապ)։ Սուրբ Գրիգորը կենդանի մնաց այնտեղ 15 տարի։ Մի բարի կին ծածուկ կերակրում էր նրան։

Այս բանից յետոյ Տրդատը հիւանդացաւ. նա խելագարուեց։ Բժիշկները չկարողացան նրան բժշկել։ Յետոյ Աստուծու հրամանով հանեցին Ս. Գրիգորին խոր վիրապից և նա աղօթքով բժշկեց Թագաւորին։

Այնուհետև Ս. Գրիգորը քարոզեց քրիստոնէութիւնը և Թագաւորն ու բոլոր ժողովուրդը հաւատացին Յիսուսին։

Թագաւորի հրամանով ս. Գրիգորը գնաց Կեսարիա, ձեռնադրուեց Ղևոնդ պատ-

րիարգից Հայոց Հայրապետ և վերադառնալով Հայաստան՝ մկրտեց Թագաւորին, իշխաններին և բոլոր ժողովրդին։ Շինեց շատ եկեղեցիներ և բաց արեց ուսումնարաններ։ Սահմանեց եկեղեցական տօներ և Աստուածպաշտութեան կարգեր։

Սուրբ Գրիգորն իւր կեանքի վերջին տարիներում սկսեց ճգնաւորական կեանք վարել և մեռաւ անյայտութեան մէջ։ Հովիւները գտան Նրա մարմինը և թաղեցին. իսկ յետոյ Նրա նշխարները տեղափոխեցին Ս. Էջմիածին։

Սուրբ Գրիգորը լուսաւորեց մեր աշխարհը քրիստոնէական հաւատով. սրա համար էլ նա կոչվում է Սուրբ Գրիգոր (երկրորդ) Լուսաւորիչ։

Ս. Գրիգոր լուսաւորչի համար նշանակված է երեք տօն. մէկը՝ խոր վիրապ ձգելու, միւսը խոր վիրապից դուրս գալու և երրորդը՝ Ս. Նշխարները գտնելու։

ԵՐԲՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՒԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Ա). «Հաւատամք ի մի Աստուած, Հայրն

ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երեւելեաց և անտեսանելեաց»։

Հաւատում ենք մի Աստուծուն, ամենակալ Հօրը՝—երկնքի ու երկրի՝ երեւելիների և անտեսանելիների՝ Ստեղծողին.

Այս խօսքերով մենք դաւանում ենք—1), որ կայ մի Աստուած և Նա ունի երեք անձինք՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի. 2), որ Հայր Աստուածը իր Որդու և Սուրբ Հոգու հետ ստեղծեց ոչնչից երկինքը, երկիրը և բոլոր տեսանելի և անտեսանելի բաները—արարածները. և 3), որ Նա ամենակալ է և բոլոր արարածներին կառավարում է ու պահպանում Իր իշխանութեան ներքոյ։

Բ). «Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն՝ յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։ Նոյն Ինքն ի բընութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի՝ երեւելիք և անտեսութիւնք»։

Հաւատում ենք և մի Տէր Յիսուս Քրիստոս՝ Աստուծու Որդուն, որ Միածին ծնուած է Հօր Աստուծուց, այսինքն՝ Հօր Էութիւնից։

Աստուած է՝ Աստուծուց, լոյս է՝ լուսից. Ճշմարիտ Աստուած է, ճշմարիտ Աստուծուց ծնած և ոչ թէ ստեղծուած։

Նոյն Ինքն Հօր (Աստուծու) բնութիւնից է, որով ամենայն բան եղաւ երկնքի մէջ և երկրի վրայ՝ երեւելիներն ու անտեսանելիները։

Սրանով դաւանում ենք—1), որ Սուրբ Երրորդութեան երկրորդ անձն է Յիսուս Քրիստոս. 2), որ Նա միածին է, այսինքն՝ չը կայ ուրիշ մէկը Նրա նման, 3), որ Նա ծնուած է Հօր Աստուծուց յաւիտենից առաջ. ինչպէս լոյսը լուսից՝ (ինչպէս լուսոյ ճառագայթը անընդհատ կերպով յառաջ է գալիս արեգակից) և չէ ստեղծուած և 4), որ Նա համաբնակից է Հօր Աստուծու հետ և ամենայն ինչ Նրանով է եղած։

Գ). «Որ յաղագս մեր մարդկան և փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ Սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով։ Որով էառ զմարմին, զհոգի և զմիտս և զամենայն, որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեաց»։

Որ մեզ՝ մարդկանց և մեր փրկութեան համար երկնքից իջաւ, մարմին առաւ, մարդ եղաւ և ծնաւ կատարեալ կերպով Սուրբ կոյս Մարիամից Սուրբ Հոգով։

Որով (Ս. Հոգով) առաւ մարմին, հոգի և միտք և այն ամենն՝ ինչոր կայ մարդու մէջ՝ ճշմարտապէս և ոչ կարծիքով։

Սրանով մենք դաւանում ենք—1). որ Աստուծու Որդին երկնքից իջաւ, այսինքն՝ երկրիս վրայ տեսանելի դարձաւ, 1), որ Նա մարմնացաւ, այսինքն, մարդկային բնութիւն առաւ Սուրբ Կոյս Մարիամից Սուրբ Հոգով և 3), որ նա կատարելապէս մարդ դարձաւ, այսինքն՝ ոչ թէ միայն մարդկային մարմին ստացաւ, այլ և մարդկային հոգի և միտք. և եղաւ կատարեալ մարդ և կատարեալ Աստուած։

Գ). «Չարչարեալ, խաչեալ, թաղեալ»։

Չարչարուեց, խաչուեց և թաղուեց։

Այս խօսքերով մենք դաւանում ենք, 1)՝ որ Աստուծու Որդին—Յիսուս Քրիստոս չարչարուեց, այսինքն՝ ցաւ զգաց և մարդկային բնութիւնով կրեց բոլոր տանջանքները, 2), որ Նա Իր յօժար կամքով Խաչի վրայ բարձրացաւ, որ մեզ ազատէ յաւիտենական պատժից և մեղքից և 3), որ Նա մեռաւ մարմնով Խաչի վրայ և թաղուեց ինչպէս մարդ։

Դ). «Յերրորդ աւուր յարուցեալ»։

Երրորդ օրը յարութիւն առաւ։

Սրանով մենք դաւանում ենք, որ Աստուծու Որդին—Յիսուս Քրիստոս մարդկային բնութիւնով մեռնելուց յետոյ՝ երրորդ օրը Աստուածային զօրութիւնով կենդանացաւ—յարութիւն առաւ։

Զ) «Ելեալ ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր»։

Նոյն մարմնով երկինք բարձրացաւ, նստեց Հօր աջ կողմը։

Այս խօսքերով մենք դաւանում ենք, 1), որ Աստուծու Որդին—Յիսուս Քրիստոս մարդկային մարմնով երկինք բարձրացաւ և 2), որ Նա նստեց Հօր աջ կողմը և դրանով ցոյց տուեց, թէ Նա ունի Հօր Աստուծու հետ հաւասար զօրութիւն և պատիւ։

Է). «Գալոց է նովին մարմնով և փառօք հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, Որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան»։

Պէտք է գայ նոյն մարմնով և Հօր փառքով կենդանիներին և մեռածներին դատելու համար, Որի թագաւորութիւնը վերջ չունի։

Սրանով մենք դաւանում ենք՝ 1) որ Աստուծու Որդին—Յիսուս Քրիստոս կրկին պէտք է գայ աշխարհ Հօր փառքով. 2) որ նա պէտքէ դատէ կենդանիներին և մեռածներին և 3), որ այս ահեղ դատաստանից յետոյ կը գայ Նրա փառաց թագաւորութիւնը, որը վերջ չի ունենալ։

Ը). «Հաւատանք և ի Սուրբ Հոգին յանեղն և ի կատարեալն, Որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ ի սուրբսն»։

Հաւատում ենք Սուրբ Հոգուն, որ անեղ (ոչ ոքից չէ եղել) և կատարեալ Աստուած է, որ խօսեց օրէնքների, մարգարէների և աւետարանների միջոցով. Որ Յորդանան գետն իջաւ, Առաքեալին (Քրիստոսին՝ Աստուծուց ուղարկուածին) քարոզեց և սրբերի մէջ բնակուեց։

Այս խօսքերով մենք դաւանում ենք — 1), որ Սուրբ Երրորդութեան երրորդ անձն է Ս. Հոգին. 2), որ Նա կատարեալ Աստուած է և հաւասար Հօր և Որդուն և հաւասար Նրանց երկրպագելի. 3) որ մարգարէները և առաքեալներն Աստուծու կամքը մարդկանց յայտնելու և Սուրբ գիրքը գրելու ժամանակ խօսում և գրում էին Սուրբ Հոգու ներշնչութիւնով 4), որ երբ Քրիստոս մկրտվում էր Յորդանան գետում, Սուրբ Հոգին իջաւ Նրա վրայ աղաւնու կերպարանքով և քարոզեց, թէ Նա ուղարկած է Հօրից և 5), որ նա բնակուեց սրբերի մէջ։

Թ). «Հաւատամք և ի միմիայն ընդհանրական և առաքելական եկեղեցի»։

Հաւատում ենք մի, ընդհանրական ու առաքելական եկեղեցի։

Այս խօսքերով դաւանում ենք - 1), որ Յիսուս Քրիստոս Իր հաստատած եկեղեցու — հաւատացեալների հետ է միշտ և տալիս է նրան շնորհ և 2), որ այդ եկեղեցին Մի է. Սուրբ է և Ընդհանրական ու Առաքելական է կոչվում։

Ժ). «Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»։

(Հաւատում ենք) մի մկրտութեան, ապաշխարութեան, և մեղաց քաւութեան.

Հաւատամքի այս խօսքերով մենք դաւանում ենք — 1), որ մկրտութիւնով մարդ ազատվում է սկզբնական մեղքից և արժանի է լինում ստանալու Սուրբ Հոգու շնորքը և դառնում է երկնաւոր Հօր որդեգիր, և 2), որ ճշմարիտ խոստովանութիւնով և ապաշխարութիւնով մարդ թողութիւն է ստանում այն մեղքերից, ինչ որ նա գործել է մկրտութիւնից յետոյ։

ԺԱ). «Ի յարութիւն մեռելոց»։

(Հաւատում ենք) մեռելների յարութեանը։

Սրանով մենք դաւանում ենք — 1), որ վերջին դատաստանի օրն Աստուծու հրամանով բոլոր մեռած մարդոց մարմինները կը կենդանանան — յարութիւն կ'առնեն և կը միանան իրենց հոգիների հետ և այնուհետև կը լինին անապական և անմահ. իսկ որոնք դեռ կենդանի կը լինին, մի ակնթարթում կը փոխուին և կը դառնան նոյնպէս անապական և անմահ։

Մեռելների յարութիւնով կը փոխուի բոլոր տիեզերքը—կը լինի նոր երկինք և նոր երկիր։

ԺԲ). «Ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս»։

(Հաւատում ենք) հոգիների և մարմինների վերջին դատաստանին, երկնքի արքայութեանը և յաւիտենական կեանքին։

Այս խօսքերով մենք դաւանում ենք—1), որ հոգիները և մարմինները պիտի դատուին Յիսուս Քրիստոսից, և իւրաքանչիւրը պիտի ստանայ իր արածի փոխարէնը և 2), մեռելների յարութիւնից յետոյ կըսկսուի մի նոր—յաւիտենական կեանք։ Այս կեանքը արդարների համար կը լինի երանելի, իսկ մեղաւորների համար—տանջանք։ Երանելի կեանքը կոչվում է դրախտ և երկնքի արքայութիւն, իսկ տանջանքը—դժոխք։

ՏԱՍՆ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ

I. «Ես եմ Տէր Աստուած քո... մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յԻնէն»։

Ես եմ քո Տէր Աստուածը, ուրիշ աստուածներ չունենաս բացի Ինձանից։

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ Նրան միայն ճանաչենք ճշմարիտ Աստուած, հաւատանք Նրան, յոյս դնենք Նրա վրայ, սիրենք, երկրպագենք և

աղօթենք։ Արգելում է ուրիշ աստուածներ ունենալ և պաշտել նրանց ինչպէս Աստուած։

Հրեշտակներին և սուրբ մարդոց մենք միայն յարգում—պատվում ենք և մեր այդ պատիւն ու յարգանքը վերաբերում են նրանց Աստուածային շնորհին և զօրութեանը, որոնց միջոցով նրանք ծառայել են Աստուծուն և կատարել են բարի գործեր։

II. «Մի արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան... մի երկիրպագանիցես նոցա և մի պաշտեսցես զնոսա»։

Ոչ մի բանի նմանութիւնով կուռք մի շինիր. երկրպագութիւն մի տուր և մի պաշտիր նրանց։

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք որ և է բանի նման, կամ որ և է առարկայ կուռք չը շինենք և Աստուածային պատիւ չը տանք նրան, այն է՝ չը պաշտենք, յոյս չը դնենք նրա վրա, ինչպէս Աստուծու վրայ։

Սուրբ պատկերների գործածութիւնը կռապաշտութիւն չէ, որովհետև մենք նրանց չենք պաշտում ինչպէս Աստուած, այլ միայն յարգում ենք և այն էլ ոչ թէ ձեռագործ պատկերը, այլ նրա վրայ նկարածի նախատիպը։ Նկարուած տէրունական պատկերի մէջ՝ Աստուծուն ենք երկրպագում, իսկ սրբերի պատկերների մէջ յարգում ենք նրանց Աստուածահաճոյ սրբութիւնը։

Սուրբ պատկերներ գործ ածելու նպատակն է, որ

մենք՝ նայելով նրանց, յիշենք Աստուծու և նրա սրբերի գործերը և օրինակ առնենք։

III. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց»։

Զուրտեղ քո Աստուծու անունը մի յիշիր։

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք նրա անունը գործ ածենք իբրև սրբութիւն և յարգենք այն ամենը, ինչոր Նրա անունն է նուիրած— օր. ս. տաճարներ, մատուռներ, պատկերներ և եկեղեցական իրեղէններ։

Նաև պատուիրում է, որ մեր աղօթքների և խոստակցութիւնների ժամանակ երկիւղածութիւնով յիշենք ու արտասանենք Նրա անունը։ Չ'երդուենք Նրա անունով զուր տեղ և անարդարութեան ժամանակ, իսկ եթէ երդուել ենք, հաստատ պահենք մեր տուած երդումը։ Երդում է կոչվում այն խոստումը, որ արտասանվում է Խաչի և Աւետարանի առաջ՝ քահանայի ներկայութեամբ։

IV. «Յիշեա սրբել զօր շաբաթու, զվեց օր գործեսցես և արասցես զամենայն գործս քո, իսկ զօթներորդ օրն, շաբաթ, նուիրեա Տեառն քում»։

Մտքումդ, պահիր, որ շաբաթ օրը սուրբ պահես. վեց օրուայ մէջ քո գործերդ արա, իսկ եօթներորդ օրը քո Տէր Աստուծուն նուիրիր։

Այս պատուիրանով Աստուած հրամայում մեզ, որ շաբաթ օր (քրիստոնեաներիս համար կիրակի), նոյնպէս և ուրիշ տօն օրերը նուիրենք սուրբ գործերին։ Աստուած պատուիրում է կեանքի մէջ այս տեսակ կարգ պահել, այն է՝ վեց օր աշխատել և գործել մարմնաւոր գործեր, իսկ տօնին հանգստանալ գործերից և կատարել Աստուծու համար գործեր։

Աստուծու համար գործերն են.—եկեղեցի գնալ, ներկայ լինել Աստուածպաշտութեան, աղօթել. կարդալ ս. Գիրքը, սովորել Աստուծու օրէնքները և մեր նմաններին բարութիւն անել—այն է՝ աղքատներին ողորմութիւն տալ, հիւանդներին այցելել, որբերին խնամք տանել. խեղճերին օգնել՝ և այլն։

Բայց եթէ անյետաձգելի գործ է և հարկը պահանջում է գործել տօն օրերին, ինչպէս են՝ անասուններին կերակուր և ջուր տալ, հրդեհից և հեղեղից մարդիկ ազատել, հիւանդների մասին հոգալ, պատերազմել կամ թշնամու յարձակմունքին դիմադրել և այլն,—ոչ թէ կարելի է, այլ պէտք է անպատճառ անել։

V. «Պատուեա զհայր քո և զմայր, զի բարի լինիցի քեզ և երկայնակեաց լիցիս ի վերայ երկրի»։

Պատուիր քո հօրը և մօրը, որ քեզ համար լաւ լինի և երկար ապրես աշխարհի վրայ.

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք պատուենք մեր ծնողներին և իբրև երախտագիտութեան նշան՝ միշտ յարգանքով վերաբերուենք

նրանց և աշխատենք ամեն բանի մէջ ուրախութիւն և վիճարութիւն պատճառել նրանց։ Բացի այդ՝ օգնենք նրանց հիւանդութեան, ծերութեան և կարօտութեան ժամանակ, աղօթենք նրանց համար և լսենք ու կատարենք նրանց բարի խրատները։

Այս պատուիրանով Աստուած նմանապէս հրամայում է, որ մենք յարգենք և այն մարդոց, որոնք ծնողների տեղն են բռնում։

Այս պատուիրանը կատարողներին Աստուած խոստանում է երկար կեանք և բաղդաւորութիւն։

VI. «Մի սպանաներ»։

Մի սպանիր։

Այս պատուիրանով Աստուած արգելում է սպանութիւնը, նմանապէս նիւթական և բարոյական վնաս տալը՝ թէ-իրան և թէ ուրիշներին։

Սպանութիւնը ներելի է միայն երկու դիպուածներում, 1), պատերազմի ժամանակ, երբ նա լինում է եկեղեցու օգտի, հայրենիքի փրկութեան համար և 2), չարագործ մարդու մահով պատիժը։

Արգելում է, որ չ'անենք այնպիսի գործ, ինչ որ կարող է վնաս տալ ուրիշի կեանքին, օր.— ծեծ, կռիւ, վէճ, խիստ վարմունք, ոխ, ատելութիւն, նախանձ, բարկութիւն, խօսքով վիրաւորանք և չափից դուրս ստրկական ծառայութիւն։

Իւրաքանչիւր մարդ պարտաւոր է պահպանել թէ ուրիշի առողջութիւնը և թէ իրը, այլապէս նա ինքնա-

սպանութիւն գործած կը լինի, որ մեծ յանցանք է։ Փոքր այն դիպուածներում, երբ լինում է թշնամու յարձակմունք, հրդեհ, հեղեղ, ժանտախտ և սրանց նման հասարակական թշուառութիւններ, ամեն մինը բարոյական պարտաւորութիւն ունի չը խնայել իր առողջութիւնը և մինչև անգամ իր կեանքն ուրիշների փրկութեան համար։

VII. «Մի շնար»։

Շնութիւն մի անիր։

Այս պատուիրանը հրամայում է մեզ, որ մենք մաքուր լինինք, չունենանք արտի չար ցանկութիւններ և չար մտածմունքներ. հեռանանք վատ իօսակցութիւններից և երգերից։

VIII. «Մի գողանար»։

Գողութիւն մի անիր։

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք գողութիւն չ'անենք, չը խլենք, չը յափշտակենք, չը պահենք և չը ծածկենք ուրիշի կարողութիւնը, ուրիշի աշխատանքը և չ'արատաւորենք ուրիշի բարի անունը։ Չը թագցնենք գտած բանը, չը գնենք մեզ յայտնի գողացած իրը։ Չը խաբենք առևտրի մէջ և խարդախութիւն չ'անենք չափի ու կշռի մէջ։ Չը կտրենք մշակների ծա-

ռաների վարձը։ Մեր պարտքը վճարենք և մեզ պահ տուածը (աւանդը) վերադարձնենք։

IX. «Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ»։

Քո ընկերոջ մասին սուտ վկայութիւն մի տուր։

Այս պատուիրանով Աստուած արգելում է մեզ, որ մենք սուտ վկայութիւն չը տանք թէ դատարանում և թէ հասարակութեան մէջ, այլ լինինք միշտ ճշմարտախօս։ Արգելում է զրպարտելը, բանբասելը, ուրիշի խօսածը կամ գրածը յեղաշրջել և ուրիշ կերպ մեկնել։ Արգելում է մատնելը, վնասելը, արժանաւորներին անուանարկելը, իսկ անարժաններին գովաբանելը։

X. «Մի ցանկանար տան ընկերի քո և մ ամենայնի, որ ինչ նորա իցէ»։

Քո ընկերոջ տան վրա աչք մի ունենար և ոչ այն բաների վրայ, ինչ նրանն է։

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեզ, որ մենք չար աչք, չար ցանկութիւն չունենանք մեր ընկերոջ ունեցածի վրայ։ Զը նախանձենք նրա բախտաւորութեան, յաջողութեան, յառաջադիմութեան և առհասարակ նրա ներքին և արտաքին լաւ կողմերի վրայ։ Զարտաւորենք և չ'անապատուենք նրան որև է բանով։ Զը յափշտակենք նրանից ոչ մի բան և ի չարը գործ չը դնենք նրա բարեմտութիւնը և ընկերական հաւատարմութիւնը, այլ ունենանք սրտի սրբութիւն դէպի նա և լինենք գոհ մեր ունեցածով։

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Աստուածպաշտութիւն են կոչվում այն եկեղեցական ծառայութիւնները, որոնք կատարվում են նշանակած ժամանակներում, որոշած կարգով ու ձևերով, ինչպէս ցոյց է տալիս եկեղեցական կանոնագիրքը։

Այդ ծառայութիւնների ժամանակ ուղղափառ հայ քրիստոնեաները փառաբանում են Աստուծուն, շնորհակալութիւն են յայտնում և խնդրում Նրա ողորմութիւնն ու օգնութիւնը։

Եկեղեցական ծառայութիւնները լինում են երկու տեսակ—մշտական, որ կատարվում է ամեն օր բոլորի համար և պատահական, որ կատարվում է միայն ժամանակաւորապէս հաւատացեալների կրօնական պահանջման համաձայն և և կոչվում է հոգեւոր պիտոյք, օրինակատարութիւն։

Աստուածպաշտութեան մշտական ծառայութիւնը լինում է երեկոյեան, առաւօտեան և ճաշին, իսկ օրինակատարութիւնները, որոնք եկեղեցու խորհուրդներն ու ննջեցեալի թաղումն են, կատարվում են, երբ հարկը պահանջում է։

ՏԱՃԱՐ, ՆՐԱ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Աստուածպաշտութիւնը մեծ մասամբ կատարվում է՝ նրա համար շինուած տան մէջ, որ կոչվում է տաճար—եկեղեցի։ Նա կառուցանվում է կամ նաւաձեւ կամ խաչաձեւ։ Մուտքը լինում է արևմտեան կողմից։ Եկեղեցու կամարների գլխին շինվում է զմբէթ մի կամ աւելի, իսկ գլխին—խաչ։

Եկեղեցու շինութիւնը բաժանվում է երեք մասի, ա) զաւիթ, ուր կանգնում էին հին ժամանակ չմկրտուածները և ապաշխարողները։ Նոր շինած եկեղեցիներից շատերը չունին այդ մասը։

Բ. տաճար, սա եկեղեցու իսկական մասն է. ուր կանգնում է հաւատացած ժողովուրդը. առջևը՝ մարդիկ, յետևը՝ կանայք։ Շատ եկեղեցիներում կանանց մասը, որ բաժան-

ված է լինում տղամարդկանցից, լինում է երկյարկանի, վերին յարկը կոչվում է Վերնատուն։

Տաճարի առաջին մասը կոչվում է ատեան, ուր կարդացվում են փոխ առ փոխ սաղմոսներ և հանդիսաւոր տօներին կատարվում են նախատօնակներ։ Ատեանի աջ և ձախ կողմերը կոչվում են դասեր. այստեղ կանգնում են հոգևորականներն ու երգում հոգեւոր երգերը-շարականները։ Դասերը կոչվում են աջակողմեան եւ ձախակողմեան։ Աջակողմեան դասի պատում շինուած է մկրտութեան աւազանը, իսկ ձախակողմեանում՝ խնկանոցը։

Եկեղեցու Գ. մասը—բեմը, որ բարձր է տաճարից աստիճաններով, ներկայացնում է Գողգոթա սարը, ուր Փրկիչը խաչուեց։ Բեմի մէջ տեղը շինած է վէմ քարի վրայ սեղան, ուր կատարվում է հաղորդութիւնը ս. խորհուրդը։ Սեղանի վերև շինած է խաչկալ։ Մի քանի եկեղեցիներում խաչկալը ունենում է դռներ, որոնց վրայ նկարած են լինում ս. Թադէոս և ս. Բարդուղիմէոս առաքեալների պատկերները։

Սեղանի վրայ դրվում են՝ ամենից վերև խաչ, յետոյ տէրունական պատկեր, ապա աւետարան, սրբ աջ և ձախ կողմերում մանատուփը, մեռոնաշիշը և մոմակալներ։

Սեղանի աջ կողմը՝ պատի մէջ շինած է ընծայարանը, ուր լինում է սկիհը, իսկ ձախակողմը՝ նշխարարանը, ուր լինում են ս. պատարագի համար պատրաստած հացն ու գինին։

Բեմի աջ և ձախ կողմերում շինած են խորաններ, մէկում զգեստաւորվում է քահանան, իսկ միւսում պահվում են եկեղեցական անօթները, զգեստները ու զարդերը։

Եկեղեցուն կից կամ նրանից փոքր ինչ հեռու՝ շինած է զանգակատունը և Աստուածպաշտութեան ժամանակ հրաւիրվում են զանգի ձայնով քրիստոնեաները եկեղեցի։

Եկեղեցու շուրջը, եթէ բնակութիւն չկայ, թաղում են ննջեցեալներ, բայց ընդհանրապէս հանգուցեալներին թաղում են առանձին տեղ՝ քաղաքից և գիւղից դուրս, որը կոչվում է գերեզմանատուն կամ հանգստարան։

ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԸ

Եկեղեցու պաշտօնեաները ժողովրդից ընտրուած մարդիկ են և բաժանվում են երկու մասի՝ սրբազնագործ և ստորին։

Սրբազնագործ են՝ սարկաւագը, քահանան, եպիսկոպոսը և Հայրապետը. իսկ ստորին՝ կիսասարկաւագը, ջահընկալը, երդմնեցուցիչը, դպիրը և դռնապանը։

Եկեղեցու պաշտօնեաները Աստուածպաշտութեան ժամանակ գործ են ածում առանձին հանդերձներ—զգեստներ։ Ստորին պաշտօնեաները հագնում են միայն ժամաշապիկ, սարկաւագը՝ ժամաշապիկ և ուրար։ Քահանան՝ ժամաշապիկ, փորուրար, գօտի, ղենջակ, բազպան, վակաս, շուրջան, սաղաւարտ և փիլոն։ Եպիսկոպոսը բացի քահանայական զգեստներից գործ է ածում Եմիփորոն, արտախուրակներ և սաղաւարտի տեղ՝ Թագ։ Հայրապետը բացի քահանայական և եպիսկոպոսական զգեստներներից գործ է ածում կոնքեռ և արծուէ զորգ։

Հայրապետը և եպիսկոպոսը կրում են մատանի, առաջինը՝ մատանի մատում, իսկ երկրորդը՝ ճկոյթ մատում։ Գործ են ածում նաև զաւազան, առաջինը՝ հովուական, իսկ երկրորդը՝ օձագլուխ։

ՍՐԲԱԶԱՆ ԱՆՕԹՆԵՐ ԵՒ ԶԱՐԴԵՐ

Աստուածպաշտութեան ժամանակ եկեղեցում գործ են ածվում սկիհ, մաղզմայ, մանատուփ, բաժակաման, մեռոնաշիշ, բուրվառ, տապանակ, խաչուառ, խաչ, աշտանակ, կերոն, կոնք, դոյլ, ղենջակ և այլն։

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ՄԱՍԻՆ

Պատարագ է կոչվում է այն Աստուածպաշտութիւնը, որի ժամանակ կատարվում է ս. հաղորդութեան խորհուրդը։ Այս ծառայութիւնը կատարվում է առաւօտեան, մեծ մասամբ ճաշին և տարին երկու անգամ երեկոյեանները—Ծննդեան և Զատկի ճրագալոյցներին.

Ս. պատարագի արարողութիւնը բաժանում է երեք մասի. ա) զգեստաւորութիւն եւ սպաս դնել բ) պատարագ երեխայից և գ) պատարագ հաւատացելոց։

Սուրբ պատարագի առաջին մասում դպիրներն երգում են «Տէր հուրդ խորին» շարականը։ Քահանան մտնում է խորան—աւանդատուն և զգեստաւորվում։ Յետոյ դուրս գալով խորանից՝ լուանում է ձեռքերը, որ նշան է սրտի մաքրութեան. ապա դառնալով դէպի ժողովուրդը՝ հրապարակով խոստովանում է իր մեղքերը և խնդրում Աստուծուց թողութիւն։ Յետոյ բարձրանում է բեմը և քաշվում է վարագոյրը։ Այստեղ քահանան աղօթում է և դնում է սպասը.—բե-

բում են հացն և գինին խորհրդի համար։ Քահանան նշխարը դնում է ժողովրդի վրայ և գինին ածելով սկիւռոյ մէջ ասում է «Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», յետոյ քողով ծածկում է և ասում. «Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ»։ Սպաս դընելը յիշեցնում է հաւատացեալներին Քրիստոսի ծնունդը։ Վարագուրի բանալը և քահանայի բեմից իջնելը ու ժողովրդին խնկարկելը նշան է Քրիստոսի աշխարհ գալուն։

Ս. պատարագի բ. մասը սկսվում է «Օրհնեալ Թագաւորութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։ Այս ժամանակ երգվում է «Սուրբ Աստուածը», վերաբերում են Աւետարանը, կարդում են ս. գրքից կտորներ, ապա Աւետարանը և ասում են Հաւատամքը։ Ս. պատարագի այս մասը կոչվում է *պատարագ երեխայից*, որովհետև այս ժամանակ կարող են ներկայ լինել ոչ միայն հաւատացեալները, որոնք ընդունել են քրիստոնէութիւնը, այլ և նրանք, որոնք ցանկութիւն են յայտնել ընդունելու, բայց չեն մկրտուել, նաև ապաշխարողները և թերահաւատները։ Ս. պատարագի այս մասը յիշեցնում է Քրիստոսի յայտնութիւնը աշխարհում և նրա քարոզութիւնները։

Ս. պատարագի գ. մասը կոչվում է *պատարագ հաւատացելոց*, որովհետև այս ժամանակ կարող են ներկայ լինել միայն հաւատացեալները։ Այս մասը սկսվում է վերաբերումից, երբ սկիհը ընծայարանից բերում, դնում են սեղանի վրայ։ Սա յիշեցնում է մեզ Քրիստոսի գնալը դէպի չարչարանք և մահ։ Ապա ասվում է ողջոյնը, որը յիշեցնում է, թէ ոչ ոք սրտի մէջ ատելութիւն, թշնամութիւն չպէտք է ունենայ։ Յետոյ երգվում է երեքսրբեան երգը՝ «Սուրբ, սուրբը» որից յետոյ խորհրդաւոր կերպով արտասանվում են Փրկչի խօսքերը «Առէք, կերէք, այս է իմ մարմին իմ, եւ Արբէք ՝ի սման է ամենեքեան. այս է արիւն իմ»։ Ապա երգվում է տէրունական աղօթքը—Հայր մերը։ Յետոյ չոքում, երգում են «Միայն սուրբ, միայն տէր» և «Քրիստոս պատարագեալը», որի ժամանակ արժանաւորները հաղորդվում են։ Վերջապէս դպիրներն երգում են գոհացողական երգերը «Լցաք ի բարութեանց քոց և գոհանամք», որից յետոյ քաշվում է վարագոյրը և քահանան իջնելով բեմից կարդում է աւետարանը և պահպանիչով օրհնում, արձակում է ժողովրդին։

ՀՍԽՀ ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
ԵՐԵՎԱՆ, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՐՋ

ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Դասագիրք հայկ. ձայնագրութեան, գ. տը-
պագրութիւն (սպառուած) . . . . 60 կ.
2. Մանկական ձայնագրեալ երգարան, ա. տը-
պագրութիւն (սպառուած) . . . . . 40 կ.
3. Ազգային ձայնագրեալ երգարան, ա. տը-
պագրութիւն (սպառուած). . . . . 80 կ.

4. Դասագիրք կրօնի, ա. գրքոյկ, գ. տպագրու-
թիւն . . . . . 20 կ.
5. Դասագիրք կրօնի. բ. գրքոյկ գ. տպ. . . 30 կ.
6. Դասագիրք կրօնի, գ. գրքոյկ . . . . . 30 կ.

Շուտով ժամուի տակ կը մտնի՝ Դասագիրք կրօնի
գ. գրքոյկը։

Վաճառվում են Թիֆլիզի «Կենտրոնական գրավաճա-
ռանոցում և աշխատասիրողի մօտ՝ Тифлисъ.
Протоіерею Езнику Ерзинкянцъ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0151327